# ԴՈՒՔ ԷՔ ԻՄ ՎԿԱՆԵՐԸ

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Գործ. 1:1-12

1 *Առաջին գիրքը, որ գրեցի, այն ամենի մասին էր, ո՜վ Թեոփիլե, ինչ Հիսուսը սկզբից արեց և ուսուցանեց,*
*2 մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգու միջոցով իր ընտրյալ առաքյալներին պատվիրեց և վերացաւ. 3 Որոնց իսկ*
*իր չարչարանքներից հետո բազում ապացույցներով կենդանի ներկայանալով՝ քառասուն օրերի ընթացքում*
*հայտնվեց նրանց և Աստծու արքայության մասին խոսեց: 4 Որքան ժամանակ որ միասին էին, Հիսուսը*
*նրանց պատվիրում էր. Չհեռանա՛ք Երուսաղեմից, այլ Հոր խոստմա՛նը սպասեք, ինչպես որ ինձանից լսեցիք:*
*5 Որովհետեւ Յովհաննէսը յիրաւի ջրով մկրտեց. բայց դուք Սուրբ Հոգով կ՚մկրտուիք, ոչ թէ շատ օրեր*
*սորանից յետոյ: 6 Եւ նորանք մէկտեղ գալով հարցնում էին նորան եւ ասում. Տէ՛ր, այս ժամանա՞կ ես*
*Իսրայելի թագավորությունը վերահաստատելու: 7 Եվ Հիսուսն ասաց նրանց. Ձեր գործը չէ ժամերն ու*
*ժամանակներն իմանալը, որ Հայրն իր իշխանությամբ սահմանեց: 8* ***Բայց դուք զօրութիւն կ՚առնէք՝***
***երբոր Հոգին ձեզ վերայ կ՚գայ, եւ իմ վկաները կ՚լինիք Երուսաղէմումը եւ բոլոր Հրէաստանի եւ***
***Սամարիայի մէջ մինչեւ երկրի ծայրերը:*** *9 Եւ երբոր այս ասեց, նորանք նայելիս՝ վերացաւ. Եւ մի ամպ*
*վեր առաւ նորան նորանց աչքերիցը: 10 Եվ մինչ նրանք իրենց հայացքը սևեռել էին դեպի երկինք և Հիսուսի*
*գնալուն էին նայում, ահա սպիտակ զգեստներով երկու մարդ երևացին, 11 Որ եւ ասեցին. Ով Գալիլեացի*
*մարդիկ, ի՞նչ եք կանգնել ու երկինք նայում. Այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացաւ, նույն կերպ էլ պիտի*
*գա, ինչպես որ նրան տեսաք երկինք գնալիս: 12 Այդ ժամանակ նրանք Երուսաղեմ վերադարձան Ձիթենյաց*
*կոչվող լեռան վրայից, որը մոտ էր Երուսաղեմին և գտնվում էր մի շաբաթ օրվա ճանապարհի չափ*
*հեռավորության վրա:*

***Մենք էլ վկաները լինելով հարուցյալ Քրիստոսի վերադարձանք մեր առօրիա կյանքին...***

***Քրիստոսը հանդիպեց անհավատներին, որտեղ նրանք գտնվում էին: Նա արեց մի բան, ինչ այսօր շատ քրիստոնյաներ դեռ չեն հասկանում: Մշակները պետք է դաշտ դուրս գան:***

***Ըստ մեկ հաշվարկի ՝ ավետարանները արձանագրել են 132 կապ, որոնք Հիսուսը ունեցել է մարդկանց հետ: Վեցը տաճարում, չորսը ՝ ժողովարաններում, իսկ 122-ը՝ մարդկանց կյանքի հիմնական մասում:***

***Christ met unbelievers where they were. He realized what many Christians today still don't seem to understand. Cultivators have to get out in the field. According to one count, the gospels record 132 contacts that Jesus had with people. Six were in the Temple, four in the synagogues and 122 were out with the people in the mainstream of life.***

***Մի մարդդ մի անգամ հանդիպման ժամանակ ասել է D.L. Moody-ին թե ինչպես է հինգ տարի «այլակերպության լեռան պես փոռձառություն ունեցել Տիրոջ հետ:***

***«Անցյալ տարի քանի հոգի ես առաջնորդել Քրիստոսին»: Մուդին շատ սահուն կերպով հարցրեց նրան: Դե, երկմտեց տղամարդը, չգիտեմ, չեմ կարող ասել: Դուք փրկե՞լ եք որևէ մեկին, Մուդին հարցրեց: Ես չգիտեմ, չեմ կարող ասել, խոստովանեց տղամարդը: Դե, ասաց Մուդին, մենք չենք ցանկանում նման փորձառություններ ունենաալ բարձրունքներից: Երբ մարդն այնքան է բարձրանում, որ չի կարողանում ներքև իջնել և փրկել աղքատ մեղավորներին, ուրեմն ինչ-որ բան սխալ է:***

## I. ՎԿԱՆ ՊԱՏՄՈՒՄ Է ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ԻՆՔԸ ԳԻՏԻ:

## A WITNESS TELLS WHAT HE KNOWS.

*Ես. 43:10 - Դուք էք իմ վկաները, ասում է Տէրը. եւ իմ ծառան, որին ես ընտրել եմ. որպէս զի գիտենաք եւ հաւատաք ինձ, եւ հասկանաք որ ԵՍ ԵՄ. ինձանից առաջ մի աստուած չկազմուեցաւ, եւ ինձանից յետոյ չի լինելու:*

- **The Role of Witnesses. Witnesses play a very important role in criminal cases. They help to clarify what happened by telling the judge or jury everything they know about an event. A witness is someone who has relevant information about a crime.**

***Օրինակ: Մեր կյանքում այսպես թե այնպես մենք վկայում ենք ինչ որ մեկի կամ ինչ որ մի բանի համար: ՎԿԱՅՈՒՄ ԵՆՔ ԿԱՄ ՎԿԱՅԵԼՈՒ ԵՆՔ***

- *Հացդ տուր աղքատին, նրա կերածով կշտացիր, կյանքդ տուր Հիսուսին, Եվ նրանով կյանք ունեցիր:*
- *Ամբ. 3:18 - Սակայն ես Տէրովը պիտի ցնծամ, պիտի իմ փրկութեանն Աստուծովն ուրախանամ:*
- *Հայ. 22:14 - Երանելի են նորա պատուիրանքները պահողները. որ նորանցը կ'լինի իշխանութիւնը կենանքի ծառի վերայ, եւ քաղաքի դռնովը ներս կ'մտնեն:*
- *Առակ. 3:18 - Նա կենաց ծառ է նորանց համար որ բռնել են նորան, եւ նա իրեն պինդ բռնողին երջանիկ կանէ:*
- *Անկեղծ սիրեցեք մեկդ մյուսի, որպեսզի նստեք աջ կողմը Հիսուսի:*
- *Հով. 11:25 - Յիսուսը ըսավ. **«**Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ինձ հաւատացողը թէեւ մեռնի էլ, կապրի:**»***
- *Սաղ. 31:5 - Քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին. դու փրկեցիր ինձ, ով Եհովայ, ճշմարիտ Աստուած:*

- **12 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ 8 ԱՆԳԱՄ ՎԿԱ ԵՆ ԿՈՉՎՈՒՄ**

  *Գործ. 5:32 - Եւ մենք նորա **վկաներն ենք** այս բաների համար, եւ Սուրբ Հոգին էլ, որ Աստուած իրեն հնազանդողներին տուավ:*

  *Գործ. 22:15 - Որովհետեւ նորա համար վկա կ'լինես բոլոր մարդկանց առաջին այն բաների համար, որ **տեսար** եւ **լսեցիր**:*

  *Գործ. 26:16 - "Բայց վե՛ր կաց և կանգնի՛ր ոտքերիդ վրա, որովհետև քեզ նրա համար երևացի, որ քեզ նշանակեմ պաշտոնյա և վկա այն բաների, ինչ դու տեսար, և այն բաների, որոնցով պիտի երևամ քեզ՝:*

***Մարդկանց վկայի քո փոխված կյանքի մասին:***

## II. ՎԿԱՆ ԿԻՍՈՒՄ Է ԻՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ:

## A WITNESS SHARES WHAT HE HAS EXPERIENCED.

*1 Հով. 1:1 - Այն, որ սկզբից էր, որին լսեցինք և մեր աչքերով տեսանք, որին նայեցինք, և որին մեր ձեռքերը շոշափեցին, այսինքն՝ կյանքի Բանի մասին:*

*1 Հով. 1:2 - և կյանքը հայտնվեց, ու **մենք տեսանք** ու **վկայում ենք** և ձեզ **պատմում ենք** այդ հավիտենական կյանքի մասին, որ Հոր մոտ էր ու մեզ հայտնվեց."*

*Ինչո՞ւ չեն մարդիկ վկայում:*

*90%-ը լավ փորձառություն չի ունեցել անցյալում:*

*Աստծո Խոսքի գիտություն չունենք:*

*Դա թողնում ենք մասնագետներին:*

*Մենք չպետք է մեր հավատը պարտադրենք ուրիշներին: (2 Կոր. 5:11 — մենք համոզում ենք)*

## III. ՎԿԱՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ Է ՄՆՈՒՄ ՄԻՆՉև ՎԵՐՋ:
## A WITNESS REMAINS LOYAL TO THE END.

### ԲԱՆԱԼԻ ԲԱՌ.

***Հունարենում վկաներ բառը դա մարթուս martures նահատակ բառն է, որից մենք ստանում ենք անգլերեն բառը martyr = նահատակ:***

***In Greek, the word for witnesses is martures, from which we get the English word martyr.***

***mä'r-tüs, μάρτυς***

*Գործ. 22:20 - 20 Եւ երբոր քո Ստեփաննոս **վկայի** արիւնը թափվում էր, ես ինքս նորա մօտ կանգնած էի, եւ նորա սպանմանը կամակից էի, եւ նորա սպանողների հանդերձները պահում էի:*

15 ***«Սիմոն, Հովնանի՛ որդի, սիրո՞ւմ ես ինձ ավելի, քան դրանք»***:

***Illustration:***
***Վաղ եկեղեցու հավատացյալները ընտրեցին մահը, քան մերժեցին մեր Տիրոջ անունը:***

***Դու պատրաստ ես կյանքդ տալ Քրիստոսի համար: Քանի որ մեզանից շատերը չեն կարող դա անել, ահա շատ ավելի դժվար հարց. Դուք պատրաստ եք ապրել նրա համար:***

***Միգուց է ես սխալվեմ: Այո դուք հավանաբար կսխալվեք: Սուրբ Հոգին սխալներ չի թույլ տալիս, և նա կարող է այնպես անել մարդկանց որ մոռանան ձեր սխալները:***

## ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Աղոթեք, որ Աստված այս շաբաթ ձեզ հնարավորություն տա վկայելու Քրիստոսի համար:**
2. **Պարտավորվեք խոսել, երբ Աստված ձեզ հնարավորություն տա, որի համար աղոթել եք:**